



ԱՐՅԱՆԻ
ՆԱԽԱՐԱՐՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԵԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱՐԱՐԱՐՆ



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 1(4), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.yసు.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(4), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

«ԱՐՑԱԽ» հրատ. – Publ. «ARTSAKH» – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

Լվիրվում է Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման հիմնադրման 5-ամյակին

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՍՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմիմա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂՎԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Ստտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎԱԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(4), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատ., 2020, 244 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 1-ին (4-րդ) համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Գերմանիան, Լեհաստանը և Ուկրաինան ներկայացնող մոտ երեք տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

***Dedicated to the 5th Anniversary
of Union of Young Scientists and Specialists of Artsakh***

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 1(4), 2020, Yerevan, Publ. «ARTSAKH», 2020, 244 pages.

The first (4) issue of «Scientific Artsakh» journal 2020 comprises the scientific works of approximately 30 prominent and young scientists from Armenia, Artsakh, Germany, Poland and Ukraine on the topical issues of social sciences.

The publication also contains the best scientific articles of the 4th international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 12-15, 2019 in Stepanakert.

***Посвящается 5-летию основания
Объединения молодых учёных и специалистов Арцаха***

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ,
член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джувлетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 1(4), 2020, Ереван, Изд. «АРЦАХ», 2020, 244 страниц.

В первом (4) номере 2020 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы около 30 выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Германии, Польши и Украины, исследующие актуальные вопросы общественных наук.

В издании размещены также лучшие научные статьи 4-ой международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 12-15 сентября 2019 года в Степанакерте.

Չարինե Մնացականյան, Մարգո Ղազարյան. ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման անհրաժեշտությունը..... 138
Karine Mnatsakanyan, Margo Ghazaryan. The Need to Develop Agricultural Cooperatives in the RA
Карине Мнацаканян, Марго Казарян. Необходимость развития сельскохозяйственных кооперативов в РА

Աշոտ Ոսկանյան, Սարգիս Հովհաննիսյան. Գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման հնարավորություններն ու հեռանկարները ՀՀ-ում..... 145
Ashot Voskanyan, Sargis Hovhannisyanyan. Opportunities and Prospects of Wholesale Trade of Agricultural Products in Armenia
Ашот Восканян, Саргис Оганнисян. Возможности и перспективы оптовой торговли сельскохозяйственной продукцией в Армении

Արմինե Սչանյան. Կենսաթոշակային բարեփոխումների անհրաժեշտությունը, կարևորությունը և շարժընթացը ՀՀ-ում..... 154
Armine Schanyan. The Necessity, Importance and Dynamics of Pension Reforms in the RA
Армине Счанян. Необходимость, важность и динамика пенсионных реформ в РА

ՍԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ **PEDAGOGY, PSYCHOLOGY** **ПЕДАГОГИКА, ПСИХОЛОГИЯ**

Մերի Ավետիսյան. Ընտանեկան դաստիարակության ժամանակակից մեթոդների կիրառությունը երեխայի անձի սոցիալականացման գործընթացի նկատմամբ տարբեր մոտեցումներ ունեցող ընտանիքներում..... 162
Meri Avetisyan. The Use of Modern Methods of Upbringing in Families with Different Approaches to the Process of Socialization of a Child's Personality
Мери Аветисян. Применение современных методов воспитания в семьях с различными подходами к процессу социализации личности ребенка

Լուսինե Հայրապետյան. Ուսուցման արդյունավետության բարձրացման գործում արտ-տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման առանձնահատկությունները..... 170
Lusine Hayrapetyan. Features of Application of Art Technologies and Methods Implemented in Increasing the Efficiency of Teaching
Лусине Айрапетян. Особенности применения арт-технологий и методов при повышении эффективности обучения

Հմայակ Մանուկյան. Հաշտարարության (մեդիացիայի) սոցիալ-հոգեբանական գործառույթների վերաբերյալ տեղեկացվածության հետազոտություն..... 178
Hmayak Manukyan. A Study of the Awareness of the Social Psychological Functions of Mediation
Амаяк Манукян. Исследование осведомленности о социально-психологических функциях медиации

ԼԵՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ **LINGUISTICS, LITERATURE STUDY, JOURNALISM** **ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ, ЖУРНАЛИСТИКА**

Հասմիկ Բաղդասարյան, Տաթևիկ Եղիազարյան. Թարգմանաբանության մեջ իրակությունների սահմանման և դասակարգման ինդիքի շուրջ..... 185

Hasmik Baghdasaryan, Tatevik Eghiazaryan. On the Problem of Definition and Classification of Realias in Translation Studies

Асмик Багдасарян, Татевик Егиазарян. К проблеме определения и классификации реалий в переводоведении

Թամարա Դանիելյան. Մեդիայում տպագրված տեքստը որպես լեզվաբանական փորձաքննության առարկա («Վաշինգտոն Փոստ» թերթի հիման վրա)..... 196

Tamara Danielyan. Media Printed Text as an Object for Linguistic Expertise (Based on the Material of the «Washington Post»)

Тамара Даниелян. Медийный печатный текст как объект проведения лингвистической экспертизы (на материале статьи газеты «Вашингтон Пост»)

Մուշեղ Հովսեփյան. Հայկական ռադիոընկերությունների փոխգործակցությունը Հայաստան-Արցախ-Սփյուռք համատեքստում.....204

Mushegh Hovsepyan. Interaction of Armenian Radio Stations in the Context of Armenia-Artsakh-Diaspora

Мушег Овсепян. Взаимодействие армянских радиостанций в контексте Армения – Арцах – Диаспора

Ռուզաննա Սարգսյան. Գրական ստեղծագործության վերլուծման մեթոդաբանության և որոշ գրականագիտական կատեգորիաների ուսումնասիրության առանձնահատկությունների մասին ըստ Ի.Բունինի «Մթին ծառուղիները» պատմվածաշարի.....211

Ruzanna Sargsyan. On the Method of Analysis of a Literary Work and Features of Studying of Some Literary Categories on the Material of I. Bunin's «Dark Avenues» Series

Рузанна Саркисян. О Методике анализа литературного произведения и особенностях изучения некоторых литературоведческих категорий на материале цикла И. Бунина «Темные Аллеи»

ԵՐԻՏԱՍԱՐԴԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ **TRIBUNE OF YOUNG SCIENTIST** **ТРИБУНА МОЛОДОГО УЧЕНОГО**

Չարուհի Չաբարյան. Արցախյան հիմնահարցը տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովման համատեքստում.....223

Zaruhi Zakaryan. The Artsakh Issue in the Context of Regional Security and Stability Ensurance

Заруи Закарян. Арцахский вопрос в контексте обеспечения региональной безопасности и стабильности

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԵՇԵՆՅՈՒՆ, REVIEWS

Չուլիետա Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., Չանգակ, 2018թ., 344 էջ:.....232

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱԼՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ

В Степанакерте состоялось первое заседание Совета попечителей фонда «Научно-исследовательский институт «Арцах».....236

«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները.....239

The requirements for «Scientific Artsakh» journal.....240

Требования к оформлению статей журнала «Научный Арцах».....242

ԼԵՉԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
LINGUISTICS, LITERATURE STUDY, JOURNALISM
ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ, ЖУРНАЛИСТИКА



ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ
ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՉ*

ՀԱՍՄԻԿ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
h.baghdasaryan@ysu.am*

ՏԱԹԵՎԻԿ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս, ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tatevik-90@mail.ru*

Հոդվածի նպատակն է քննել թարգմանաբանության մեջ ազգամշակութային նշույթավորվածությունն ունեցող տարրերի՝ իրակությունների սահմանման ու դասակարգման խնդիրը, որը դեռևս չի գտել իր գիտական սպառնիչ լուծումը: Լեզվաբանության արդի՝ լեզվամշակութային հարացույցում տեքստը դիտարկվում է որպես աշխարհի ազգային-լեզվական պատկերի մի մաս, որի թարգմանության ժամանակ առանձնահատուկ խնդիրներ են առաջադրում իրակությունները՝ ի ցույց դնելով համընդհանուրի, ազգայինի ու անհատականի հակադրամիասնությունը՝ որպես թարգմանական գործընթացի մեթոդաբանական հենք: Հոդվածում քննվում են ռուս, արևմտաեվրոպական և ամերիկյան թարգմանաբանական դպրոցներում իրակությունների Էոլթյան, սահմանման ու դասակարգման շուրջ մի շարք առավել հայտնի տեսություններ ու մոտեցումներ: Հարցի քննությունը կատարվում է ոչ միայն թարգմանաբանական, այլև համեմատական-լեզվաբանական, լեզվամշակութաբանական և լեզվաերկրագիտական տեսանկյունից: Հոդվածում կիրառվել են վերլուծական ու համեմատական քննության մեթոդները:

Հարցի տեսության ամփոփ քննությունը ցույց է տալիս, որ, չնայած խնդրի կարևորությունը թարգմանության տեսության և պրակտիկայի համար, դեռևս չկա հայեցակարգային ու տերմինաբանական համաձայնություն տարբեր տեսաբանների միջև: Հոմանիչ ելույթների բավմապանությունը, ինչպես նաև ազգամշակութային տարրերի քննության տարբեր սկզբունքների առկայությունը մեծ խնդիրներ է առաջադրում իրակությունների սահմանման ու դասակարգման հարցում:

* Հոդվածը ներկայացվել է 11.02.2020թ., գրախոսվել՝ 17.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

Ղիմնաբաներ՝ թարգմանաբանություն, իրականություն, լեզվաերկրագիտություն, լեզվամշակութաբանություն, թարգմանաբանական դպրոց, իրականությունների սահմանում և դասակարգում, հայեցակարգային և տերմինաբանական անհամաձայնություն:

Վերջին տասնամյակներում լեզվի ու մշակույթի փոխհարաբերության խնդիրը դարձել է մի շարք գիտակարգերի՝ էթնոլեզվաբանության, մարդաբանության, թարգմանաբանության, լեզվամշակութաբանության, լեզվաերկրագիտության, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի և այլն, քննության առարկան:

Գիտական տարբեր ուսումնասիրություններում լեզվամշակութային տարրերը բնորոշելու համար առաջադրվել են տարբեր եզրույթներ, որոնք տարբերվում են ինչպես իրենց հասկացական բովանդակությամբ, այնպես էլ գործածության հաճախականությամբ և գիտական հանրության կողմից ընդունելիության աստիճանով: Լայն առումով, ազգամշակութային տարրերը դիտարկվում են որպես տվյալ լեզվամշակութային համայնքի ուրույն նյութական ու հոգևոր մշակույթի կրողներ, որոնք պահպանում և սերնդեսերունդ փոխանցում են «ժողովրդի հիշողությունը»՝ ի ցույց դնելով, թե «կողորինատների որ ցանցով» է տվյալ ժողովուրդն ընկալում ու մեկնաբանում աշխարհը և կառուցում աշխարհի իր առանձնահատուկ պատկերը:

Թարգմանաբանական տարբեր աշխատություններում ազգամշակութային տարրերը բնորոշելու, դրանց էությունը մեկնաբանելու և դասակարգելու համար առաջադրվել են մի շարք եզրույթներ ու կապակցություններ՝ «ազգային գունավորում», «իրականություն» (Ա. Ֆեոդորով), «իրականություն» (Ս. Վլախով, Ս. Ֆլորին), «կուլտուրեմա» (Վ. Գակ, Զ. Նորդ), «մշակութային բառ» (Պ. Նյումարկ) և այլն²⁷⁹: Իսպանագիտական աղբյուրներում ազգամշակութային տարրերն այսօր նույնպես դարձել են լայն քննության առարկա, և դրանք դիտարկվում են նաև որպես «մշակույթին հատուկ տարր» (Խ. Ֆրանկո Աիբեսելա), «մշակութային առումով նշույթավորված տեքստային հատված» (Ռ. Մայորալ Ասենսիո, Ռ. Մունյոս Մարտին), «մշակութային վերաբերություններ» (Գրանադայի թարգմանաբանական դպրոցը, Ռ. Մայորալ Ասենսիո) և այլն, թեև առավել տարածված եզրույթներից է *կուլտուրեման* (Լ. Մոլինա Մարտինես)²⁸⁰: Տարբեր թարգմանաբանական դպրոցներում ազգամշակութային տարրերի անվանման ու տերմինային բազմազանության խնդիրը մանրամասն քննում է Ռ. Մայորալ Ասենսիոն²⁸¹:

Ռուս թարգմանաբանական դպրոցում առաջիններից մեկը Ա. Ֆեոդորովն է, որն անդրադառնում է ազգամշակութային տարրերին՝ քննելով գեղարվեստական գրականության թարգմանության մեջ ազգային գունավորման պահպանման խնդիրը, որը մեծ դժվարություններ է ստեղծում ինչպես գործնական լուծման, այնպես էլ տեսական վերլուծության հայեցակերպում: Ըստ Ա.Ֆեոդորովի՝ ազգային գունավորումը գեղարվեստական ստեղծագործության կոնկրետ առանձնահատկություններից է, որը կարող է դրսևորվել ինչպես նրա պատկերային համակարգում, այնպես էլ տեքստի

²⁷⁹ Տե՛ս **Ֆեօդորով Ա. В.** Основы общей теории перевода (лингвистические проблемы). М.: Высшая школа, 1983; **Влахов С., Флорин С.** Непереводимое в переводе. М.: Высшая школа, 1980; **Гак В. Г.** Языковые преобразования. М.: Школа «Языки русской культуры», 1998; **Nord C.** El funcionalismo en la enseñanza de traducción // Mutatis Mutandis. Vol. 2, N 2, 2009, pp. 209-243; **Newmark P.** Manual de traducción (versión española de Virgilio Moya). Madrid: Ediciones Cátedra, 1992.

²⁸⁰ Տե՛ս **Franco Aixelá J.** Culture-Specific Items in Translation // Translation, Power, Subversion. Ed. Román Álvarez and M. Carmen-África Vidal. Topics in Translation 8. Clevedon: Multilingual Matters, 1996, pp. 52-78; **Mayoral Asensio R., Muñoz Martín R.** Estrategias comunicativas en la traducción intercultural // Fernández P.; Bravo J. M^a (eds.) Aproximaciones a los estudios de traducción. Valladolid: Servicio de Apoyo a la Enseñanza, Universidad de Valladolid, 1997, pp. 143-192; **Mayoral Asensio R.** La traducción de referencias culturales // Sendebarr 10/11, 1999/2000, pp. 67-88; **Molina Martínez L.** Análisis descriptivo de la traducción de los culturemas árabe-español (Tesis doctoral). Universitat Autònoma de Barcelona, 2001.

²⁸¹ Տե՛ս **Mayoral Asensio R.**, նշվ. աշխ.:

հատկաբանական բնույթում, ընդ որում, ինչքան տվյալ ստեղծագործությունն իր արծարծած թեմաներով մոտ է ժողովրդի կյանքին, նրա կենցաղին, իսկ ոճով՝ բանահյուսությանը, այնքան ավելի ցայտունորեն է դրսևորվում ազգային գունավորումը: Ա. Ֆեոդորովը արդարացիորեն նշում է, որ ազգային երանգավորումը չի կարող առնչվել սոսկ գեղարվեստական ստեղծագործության որևէ ձևական առանձնահատկության հետ (օրինակ՝ բառապաշարի որևէ տարր կամ առանձին քերականական երևույթ), այլ ընդգրկում է ստեղծագործության առանձնահատկությունների մի ամբողջություն²⁸²: Այնուամենայնիվ, ինչպես և նկատում է Ա. Ֆեոդորովը, խնդիրը դեռևս քիչ է ուսումնասիրված, տեսական ու գործնական հայեցակերպում այն բավականին բարդ է և պահանջում է հաշվի առնել լեզվական միջոցների ողջ համակարգը:

Ռուս թարգմանաբանական դպրոցի ձևավորման սկզբնափուլում մշակութային տարրերի սահմանումը փորձել են ներկայացնել նաև այլ լեզվաբաններ՝ դրանք քննելով որպես «իրակություններ» (Լ. Սոբոլև), «անհամարժեք բառապաշար» (Գ. Չերնով), «տարաշխարհիկ բառապաշար» (Ա. Սուկորև) և այլն²⁸³: Ռուս լեզվաբան Օ. Ախմանովան իր հայտնի «Լեզվաբանական եզրույթների բառարանում» իրակությունները սահմանում է որպես տարբեր գործոններ, որոնք ուսումնասիրվում են արտաքին լեզվաբանության կողմից, ինչպիսիք են օրինակ՝ տվյալ երկրի պետական կառուցվածքը, տվյալ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, տվյալ լեզվակիրների լեզվական շփումները և այլն, որոնք արտացոլվում են լեզվում: Բացի այդ, այս եզրույթի տակ հասկացվում են նաև նյութական մշակույթի առարկաները²⁸⁴:

Լեզվաերկրագիտության՝ որպես լեզվադիդակտիկայի առանձին ճյուղի հիմնադիրներ Ե. Վերեչչագինայի և Վ. Կոստոմարովի տարբեր աշխատություններում մանրամասն քննության առարկա են դարձել լեզվի և այն կրող ժողովրդի ազգային մշակույթի փոխհարաբերության հարցերը: Լեզվաերկրագիտության մեջ իրակությունների քննության մեկնակետը լեզվի այն գործառույթն է (ըստ այս հեղինակների՝ кумулятивная функция), որի շնորհիվ բառում արտացոլվում, պահպանվում և սերնդեսերունդ փոխանցվում է արտալեզվական իրականության վերաբերյալ տեղեկատվությունը: Մի կողմից՝ լեզուն հասարակական երևույթ է, որը պահպանում է այն տեղեկատվությունը, որը բնորոշ է տվյալ լեզվամշակութային համայնքին, մյուս կողմից՝ այն անհատական բնույթ ունի և պահպանում է անհատի անկրկնելի, ուրույն կենսափորձը: Այնուամենայնիվ, հիմնվելով լեզվում համընդհանուրի և անհատականի անբաժանելի հակադրամիասնության վրա, որը կարևորվում է նաև հաղորդակցական ակտում, հեղինակները պնդում են, որ անհատական գիտակցությունը «իսկական համագիտելիք է, համատեղ գիտելիք, այն մեծամասամբ մարդու «սոցիալիզացիայի» արդյունք է, նրա կողմից լեզվում պահպանվող հասարակական փորձի յուրացում»²⁸⁵: Բառի բովանդակային կառուցվածքը բառային հասկացությունից բացի ընդգրկում է նաև *բառային ֆոն*, որն արձանագրում և պահպանում է տվյալ

²⁸² Ст'у Фёдоров А. В. Основы общей теории перевода (лингвистические проблемы). М.: Высшая школа, 1983, с. 279-280.

²⁸³ Ст'у Соболев Л. Н. Пособие по переводу с русского языка на французский. М.: Изд. лит. на иностр. яз., 1952; Чернов Г. В. К вопросу о передаче безэквивалентной лексики при переводе советской публицистики на английский язык // Ученые записки 1-го МГПИИЯ, т. XVI, М., 1958; Супрун А. Е. Экзотическая лексика // ФН, М., 1958, № 2, с. 50-54.

²⁸⁴ Ст'у Ахманова О. С. Словарь лингвистических терминов. М.: Советская энциклопедия, 1966, с. 381.

²⁸⁵ Верещагин Е. М., Костомаров В. Г. Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980, с. 7.

լեզվամշակութային համայնքի հոգևոր և կյուրական արժեքները²⁸⁶: Բառային ֆոնը ավելի լայն է, քան բառային հասկացությունը, այսինքն՝ բառային հասկացությունը մտնում է բառային ֆոնի մեջ, ինչպես մասը ամբողջի մեջ: Խոսքն անհամարժեք բառերի մասին է, որոնք չունեն իմաստային համապատասխանություններ այլ լեզուներում: Հիմնվելով ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման սեփական փորձի վրա՝ Ե. Վերեշչագինան և Վ. Կոստոմարովը ռուսերենի բառապաշարում առանձնացնում են ֆոնային ու անհամարժեք բառապաշարի յոթ խումբ՝ խորհրդային բառապաշար, կոր կենցաղի բառեր, ավանդական կենցաղի առարկաների և երևույթների անվանումներ, պատմաբառեր, դարձվածապաշար, բանասիրական բառեր և ոչ ռուսերեն ծագում ունեցող բառեր (пельмени, харчо, чайхана, аул, караван, кумыс և այլն): Թարգմանության՝ որպես միջլեզվական և միջմշակութային հաղորդակցության ակտի առումով կարևորվում է նաև այս հեղինակների առաջադրած տեսության մեջ հաղորդակցության մասնակիցների գիտելիքների՝ այսպես կոչված *ֆոնային գիտելիքների* (фоновые знания, background knowledge) առանձնացումը, որի արդյունքում տարբերակվում են համամարդկային, տարածաշրջանային ու երկրագիտական (տվյալ էթնիկական և լեզվական հանրույթին բնորոշ) գիտելիքները²⁸⁷: Ազգամշակութային կամ լեզվաերկրագիտական նշույթավորվածություն ունեցող բառապաշարի համակարգման գլխավոր սկզբունքը, ըստ այս հեղինակների, արտալեզվական (թեմատիկ) սկզբունքն է, որի հիման վրա նրանք առաջադրում են իրակությունների տարբեր տեսակներ՝ հատուկ անդրադարձ կատարելով նաև հատուկ անունների քննությանը²⁸⁸: Հատկանվանական բառապաշարը նույնպես իր իմաստում կրում է ազգամշակութային բաղադրիչ: Թեև վերջիններիս հատուկ չէ բառային հասկացությունը, այնուամենայնիվ, դրանց բառային ֆոնը ընդգրկում է և որակապես բավականին բարդ:

Իրակությունների ամբողջական ու համակողմանի տեսությունը թարգմանաբանության տեսանկյունից առաջադրել են հայտնի բուլղարացի թարգմանաբաններ Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը: Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը ազգային ու պատմական կյուրիտը կրող տարրերը անվանում են *реалия* «իրակություն»: Այս թարգմանաբանների հայտնի «Անթարգմանելի թարգմանության մեջ» գիրքն ամբողջովին նվիրված է իրակությունների սահմանման, հարակից հասկացություններից սահմանազատման, դասակարգման և թարգմանության խնդիրներին: Գրքում մանրամասն քննության առարկա են դարձել ազգամշակութային տարրեր անվանող մի շարք եզրույթներ՝ անհամարժեք բառապաշար, տարաշխարհիկ բառեր (բառապաշար), աղճատաբանություններ, տեղաբանություններ, ազգագրական բառեր, ֆոնային բառեր, հարանշանակային, մշակութային բաղադրիչ պարունակող բառեր, բացեր (lacune) և այլն: Նշված հասկացությունները խմբավորվում են մի իմաստային դաշտում՝ ըստ իրենց պատմական, ազգային ու տեղական երանգավորման, ինչպես նաև թիրախ լեզվում համարժեքների բացակայությամբ: Այս հիմնարար աշխատության մեջ առանձնացվում են նշված «անթարգմանելի տարրերի» էական տարբերակիչ հատկանիշները, կատարվում տերմինային ճշգրտումներ: Ս. Վլախովի և Ս. Ֆլորինի կարծիքով՝ իրակությունները «բառեր են (և բառակապակցություններ), որոնք անվանում են այնպիսի առարկաներ, որոնք բնորոշ են մի ժողովրդի կյանքին (կենցաղ, մշակույթ, հասարակական ու պատմական զարգացում) և օտար են այլ ժողովուրդների համար:

²⁸⁶ **Տե՛ս Верещагин Е. М., Костомаров В. Г.** Язык и культура. Лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М.: Русский язык, 1976, с. 74-83; **Верещагин Е. М., Костомаров В. Г.** Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980, с. 20-27.

²⁸⁷ **Տե՛ս Верещагин Е. М., Костомаров В. Г.** Язык и культура. Лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М.: Русский язык, 1976, с. 210.

²⁸⁸ **Տե՛ս Верещагин Е. М., Костомаров В. Г.** Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980, с. 170-177.

Լինելով ազգային և (կամ) պատմական երանգավորման կրող՝ իրակությունները, որպես կանոն, չունեն ճշգրիտ համապատասխանություններ (համարժեքներ) այլ լեզուներում, հետևաբար և չեն թարգմանվում «ընդհանուր հիմունքներով»՝ պահանջելով հատուկ մոտեցում»²⁸⁹: Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը ներկայացնում են իրակությունների նոր դասակարգում՝ կարևորելով դրանց առարկայական, տեղական, ժամանակային և թարգմանական բաժանման սկզբունքները: Ըստ առաջին բաժանման՝ տարբերակվում են աշխարհագրական, ազգագրական և հասարակական-քաղաքական իրակություններ՝ յուրաքանչյուր խմբում մանրամասն ներկայացնելով մի շարք ենթախմբեր: Այս գրքում իրակությունները դիտարկվում են ինչպես մի լեզվի տիրույթում (այսինքն՝ սեփական և օտար իրակություններ), այնպես էլ լեզուների որևէ զույգի տիրույթում՝ զանազանվելով ներքին ու արտաքին իրակությունների: Սեփական են ազգային, տեղական և միկրոիրակությունները, օտար՝ միջազգային ու տարածաշրջանային իրակությունները²⁹⁰: Ս. Վլախովը և Ս. Ֆլորինն անդրադառնում են նաև հարակից այլ հասկացությունների, ինչպիսիք են՝ դարձվածային միավորները, հատուկ անունները, հապավումները, եզրույթները, գրական նորմայից շեղումները (բարբառներ, ժարգոն, արգո և այլն), կոչական բառերը, բնածայնություններն ու ծայնարկությունները, բառախաղերը, արտալեզվական տարրերը և այլն, որոնք նույնպես պատկանում են անհամարժեք բառապաշարին:

Լինելով իրակությունների մասին ծավալուն ու համակարգված առաջին աշխատությունը, որը զարգացնում և խորացնում է իրակությունների վերաբերյալ լեզվաերկրագիտական տեսությունը, «Այլթարգմանելին թարգմանության մեջ» աշխատությունն ի ցույց է դնում նաև իրակությունների բազմահայեցակարգային բնույթը, դրանց սահմանման, դասակարգման ու թարգմանության ժամանակ ծագող բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրները: Հարկ է նշել, որ Վլախովը ու Ֆլորինն առաջին անգամ ներկայացնում են իրակությունների՝ որպես ազգային երանգավորման «տեսանելի» տարրերի ամբողջական, համակարգված տեսություն, որում առաջադրվում են նաև իրակությունների դասակարգման տարբեր սկզբունքներ: Այդ ուսումնասիրությունը խորհրդային և հետխորհրդային շրջանում դարձավ դասական մի ուսումնասիրություն, որի վրա են հիմնվեցին հետագայում առաջարկված տարբեր դասակարգումները: Թեև հետագա ուսումնասիրություններում հիմնականում ռուս թարգմանաբանական դպրոցում օգտագործվում է «իրակություն» եզրույթը, բայց միաժամանակ հստակորեն սահմանազատում են նաև *իրակությունը*՝ որպես արտալեզվական իրականության առարկա կամ երևույթ, և *բառ-իրակությունը*՝ որպես լեզվական նշան, որի շնորհիվ տվյալ առարկան կամ երևույթը ստանում են լեզվական կերպարանք:

Լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրության տեսանկյունից իրակությունների խնդիրը մանրամասն քննվել է ռուս հայտնի ռոմանագետ Վ. Գակի աշխատություններում: Քննելով մշակույթի բնագավառում ի հայտ եկող անհամաչափությունները (асимметрия)՝ հեղինակը նախ հստակորեն զանազանում է իրակություններն ու կուլտուրեմաները: Նա մշակույթը դիտում է որպես որոշակի նշանների (կուլտուրեմաների) ամբողջություն: Յուրաքանչյուր նշան ներկայացնում է ձևական ու բովանդակային կողմերի կապ և հարաբերակցվում արտալեզվական իրականության որոշակի տարրի հետ՝ որևէ իրակություն՝ առարկա կամ իրադրություն արտահայտելու կամ նշանակելու համար, ընդ որում, հեղինակը քննում է միայն այն կուլտուրեմաները, որոնք ունեն լեզվական արտահայտություն՝ գրավոր կամ բանավոր: Նման կուլտուրեմաներում լեզվական նշանը նշանակիչն է, իսկ իրակությունը՝

²⁸⁹ Влахов С., Флорин С. Непереводимое в переводе. М.: Высшая школа, 1980, с. 47.

²⁹⁰ Նույն տեղում, էջ 51-65:

Նշանակյալը: Վ. Գակը իրակություն է համարում այն ամենը, ինչն առնչվում է մշակույթին՝ առարկա, գործառույթ, սովորույթ, վարքագծի տարբեր դրսևորումներ և այլն²⁹¹: Երկու լեզուների կուլտուրեմաները քննելիս երևան են գալիս համաչափություններ և անհամաչափություններ: Առաջին դեպքում թարգմանական խնդիրներ չեն առաջանում, մինչդեռ անհամաչափությունները կարող են դրսևորվել երեք հայեցակերպում՝ նշանագիտական, հարացուցային ու շարակարգային²⁹²:

Նշանագիտական պլանում դիտարկվում է նշանային հարաբերությունների որևէ բաղադրիչի՝ նշանակիչի կամ նշանակյալի բացակայություն: Հեղինակը, հիմնվելով ռուսերեն-ֆրանսերեն լեզվանյութի վրա, առանձնացնում է երկու դեպք. նախ՝ որևէ իրակություն գոյություն ունի շփման մեջ գտնվող մշակույթներից մեկում, մինչդեռ մյուս մշակույթում, հետևաբար և լեզվում չունի հատուկ անվանում (կերակրատեսակներին, հագուստին, կենցաղին վերաբերող մի շարք իրակություններ, ինչպես օրինակ՝ *fin de série* (հագուստի խանութներում), *livres d'analogie* (դեղատներում), *fin de zone bleu* (*zone bleu*՝ մեթենաների կայանման սահմանափակ ժամանակով տարածք) և այլն), երկրորդ՝ որևէ իրակություն գոյություն ունի շփման մեջ գտնվող երկու մշակույթներում, սակայն նրանցից մեկում այն չունի բառային անվանում: Այս առումով հեղինակը գտնում է, որ ֆրանսիական մշակույթային միջավայրը ավելի «տեղեկատվական» է, քան ռուսականը, որտեղ հաճախ նմանատիպ երևույթների համար չկան հատուկ անվանումներ, օրինակ՝ *escalier roulant* o *mécanique* (մետրոյում), *tête de station* (տաքսիների կայանման սկզբնամասը) և այլն: Այս դիտարկումը վերաբերում է նաև հայերենին, որը տվյալ պարագայում նույնպես նվազ «տեղեկատվական» է:

Հարացուցային անհամաչափությունները դիտարկվում են այն դեպքում, երբ կան տարբերություններ նշանային հարաբերությունների որևէ մակարդակում (իրակությունների, իմաստների կամ հենց նշանների), իսկ շարակարգային անհամաչափությունների դեպքում առարկայական շարքն իր շարունակական ձևում տարբեր ձևով է տարբերակվում երկու լեզվական հանրություններում (*hidun. la Descente de Croix* և *la Déposition de Croix* արտահայտությունները ֆրանսերենում, որոնք ռուսերենում արտահայտվում են մեկ բառով՝ *снятие с креста*):

Իր «Լեզվական փոխակերպումներ» հսկայածավալ աշխատության մեջ Վ. Գակը փաստացի մեծ կյուբի հիման վրա ցույց է տալիս, որ կուլտուրեմաներն ու իրակությունները, լինելով սերտ հարաբերակցության մեջ, այնուամենայնիվ նույնական չեն: Հեղինակը մանրամասն ներկայացնում է մշակույթի կառուցվածքում նշանային հարաբերությունների հիմնական տիպերը, ինչպես նաև ուսումնասիրում այս բնագավառում դիտարկվող միջլեզվական անհամապատասխանությունները: Այնուամենայնիվ, ինչպես նշում է հեղինակը, կուլտուրեմայի հասկացությունը ճշգրտումների կարիք ունի, քանի որ որոշիչ է համարվում ոչ թե անվանման ձևը, այլ նշված հասկացության կոնկրետ կառուցվածքն ու գործառույթը, լեզվակիրների գիտակցության մեջ նրա հետ կապված որոշակի զուգորդումների առկայությունը²⁹³:

Իրակությունների դասակարգման ժամանակ ծագող խնդիրները, ինչպես նաև դասակարգման տարբեր սկզբունքների գոյությունը ևս մեկ անգամ ի ցույց են դնում, թե ինչ խորությամբ և չափով է մշակույթը ներթափանցում ազգային լեզվի մեջ և նրանում արտացոլվում: Լեզուն, իր հերթին լինելով ազգային մշակույթի անբախտելի մաս, պահպանում և սերնդեսերունդ փոխանցում է ազգային արժեքները, մշակույթային անկրկնելի կոդերը:

²⁹¹ St' u Гак В. Г. Языковые преобразования. М.: Школа «Языки русской культуры», 1998, с. 142.

²⁹² Նույն տեղում, էջ 145-150:

²⁹³ Նույն տեղում, էջ 145:

Իրակությունների խնդրի շուրջ տարբեր տեսություններ ու մոտեցումներ ուսումնասիրելիս հարկ է կարևորել ռուս հայտնի իսպանագետ ու թարգմանաբան Վ. Վինոգրադովի ավանդը, որն իր ուսումնասիրություններում ընդլայնում է իրակությունների սահմանները՝ դրանք դիտարկելով որպես ֆոնային տեղեկատվություն պարունակող բառապաշար: Ըստ Վ. Վինոգրադովի՝ ֆոնային տեղեկատվությունը որոշակի ազգի կամ ազգության բնորոշ հանրամշակութային տեղեկություններ են, որոնք յուրացվել են դրանց ներկայացուցիչների կողմից և արտացոլվել տվյալ ազգամշակութային համայնքի լեզվում²⁹⁴: Հիմնվելով Ս. Վլախովի և Ս. Ֆլորինի դասակարգման վրա՝ նա կատարում է որոշ փոփոխություններ և իր դասակարգման մեջ ներառում նաև հատկանվանական ու զուգորդական իրակությունները (կենդանական, բուսական, գունային խորհրդանիշեր, բանահյուսական, պատմական, գրական-գրքային ակնարկներ, լեզվական ակնարկներ): Վերջիններս կապված են ամենատարբեր ազգային, պատմամշակութային երևույթների հետ և արտացոլվում են ոչ թե իրակություններում կամ անհամարժեք բառապաշարում, այլ սովորական բառերում, որոնք աչքի են ընկնում հուզարտահայտչական և գնահատողական հարանշանակություններով, ուրույն ներքին ձևով՝ ի ցույց դնելով համեմատական պլանում հասկացական բովանդակությամբ նման բառերի ֆոնային տեղեկատվության անհամապատասխանությունները (օրինակ՝ արև, լուսին, ծով բառերի հետ կապված ֆոնային տեղեկատվությունը տարբեր ժողովուրդների շրջանում):

Արևմտաեվրոպական և ամերիկյան թարգմանաբանական դպրոցներում նույնպես ազգամշակութային տարրերի սահմանման ու դասակարգման խնդիրը եղել է տարբեր քննությունների առարկա, բայց դեռևս չի գտել գիտական սպառիչ լուծում, և չի ձևավորվել հարցի քննության միասնական կարծիք: Մշակութային տարրերի համակարգման ու դասակարգման առաջին փորձը կատարել է Յու. Նայդան իր հայտնի «Linguistics and Ethnology in Translation problems» հոդվածում, որում հիմնվելով Աստվածաշնչի թարգմանության իր բազմամյա փորձի վրա՝ առանձնացնում է մշակութային վերաբերությունների 5 տիրույթ, որոնք առաջադրում են թարգմանական ամենամեծ խնդիրները. 1. Էկոլոգիա, 2. Նյութական մշակույթ, 3. սոցիալական մշակույթ (հասարակական կազմակերպման տարբերություններ, սովորույթներ ու ավանդույթներ), 4. կրոնական մշակույթ, 5. լեզվամշակույթ²⁹⁵:

Ավելի ուշ Պ. Նյումարկը, ազգամշակութային նշույթավորվածություն ունեցող լեզվական միավորները քննարկում է «մշակութային բառ» հասկացության ներքո, զանազանում համընդհանուր, մշակութային ու անձնական (անհատական) լեզուներ: Նյումարկը շեշտը դնում է մշակութային լեզվի վրա՝ վեր հանելով այն հատուկ բառերն ու եզրույթները, որոնք խնդիրներ են առաջ բերում թարգմանության ժամանակ՝ ելակետային ու թիրախ լեզուների միջև ստեղծելով մշակութային «բացեր» ու «հեռավորություն»: Հիմնվելով Յու. Նայդայի դասակարգման վրա՝ նա առանձնացնում է *մշակութային բառերի* հետևյալ հինգ խմբերը. 1. Էկոլոգիա, 2. Նյութական մշակույթ, 3. սոցիալական մշակույթ, 4. կազմակերպություններ, գործունեության տարբեր տեսակներ և այլն, 5. ժեստեր և սովորույթներ: Այսպիսով՝ ի տարբերություն Յու. Նայդայի դասակարգման՝ այստեղ ներառված չէ լեզվական մշակույթը, քանի որ Նյումարկը լեզուն չի դիտարկում որպես մշակութային բաղադրիչ կամ առանձնահատկություն՝ նկատի

²⁹⁴ Ст'ю Виноградов В. С. Перевод: Романские языки: общие и лексические вопросы. М.: КДУ, 2009, с. 37:

²⁹⁵ Ст'ю Nida E. Linguistics and ethnology in translation problems // Nida E. (eds.), Exploring Semantic Structures. Munich: Wilhelm Fink Verlag, 1975, pp. 194-208. Ст'ю նաև Nida E., Taber Ch. La traducción: Teoría y práctica. Madrid: Ediciones Cristiandad, 1986.

ունենալով, որ այդ դեպքում ամեն մի թարգմանություն լայն իմաստով անհնար կլինի²⁹⁶: Կարելի է նկատել, որ Նյումարկի դասակարգման Նորույթը ոչ խոսքային տարրերի՝ ժեստերի ներառումն է: Հեղինակը կարևորում է նաև «մշակութային օջախ» հասկացությունը, որը ներառում է այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք ունեն առանձնահատուկ նշանակություն տվյալ լեզվամշակույթում, ինչպես օրինակ՝ ցլամարտը՝ Իսպանիայում, պանիրն ու գինին՝ Ֆրանսիայում, ձյունը՝ Եսկիմոսների կյանքում, ուղտը՝ արաբների համար և այլն:

Թարգմանական ուսումնասիրություններում մշակութային տարրերի առավել ընդունված ու տարածված անվանումներից է *կուլտուրեման*, որը, ինչպես սահմանում է արդի հայտնի թարգմանաբան Նորդը, «որևէ Ա մշակույթին պատկանող մշակութային երևույթ է, որը համարվում է էական տարբերակիչ այդ մշակույթի անդամների համար, և եթե այն համեմատենք որևէ Բ մշակույթի նմանատիպ հասարակական երևույթի հետ, այն հատուկ կլինի Ա մշակույթին»²⁹⁷: Ըստ տեսաբանի՝ մշակութային նշույթավորվածություն ունեն այն երևույթները, որոնք որոշակի ձևով ու գործառնությամբ գոյություն ունեն համեմատվող մշակույթներից միայն մեկում: Նման քննության դեպքում *կուլտուրեման* նույնականանում է զուտ արտալեզվական երևույթների հետ:

Հարցի քննությանը այլ դիտանկյունից է մոտենում իսպանացի թարգմանաբան Լ. Մոլինա Մարտինեսը, որը նորովի է մեկնաբանում կուլտուրեման՝ այն դիտարկելով որպես «խոսքային կամ հարախոսքային տարր, որը մի մշակույթում ունի հատուկ մշակութային ծանրաբեռնվածություն և այլ լեզվում հաղորդելիս կարող է առաջ բերել գրոյական կամ բնագրից տարբեր փոխադրում»²⁹⁸: Ի տարբերություն Նորդի մոտեցման՝ Լ. Մոլինա Մարտինեսը ազգամշակութային տարրերի գործածությունը դիտարկում է լեզվական երևույթների տիրույթում: Հեղինակը քննադատում է նաև ազգամշակութային տարրերի՝ որպես լեզվի ստատիկ տարրերի դիտարկումը՝ շեշտադրելով դրանց դինամիկ բնույթը և համատեքստից անմիջական կախվածությունը: Ազգամշակութային տարրերը չեն կարող գոյություն ունենալ համատեքստից դուրս, այլ առաջ են գալիս երկու մշակույթների միջև մշակութային փոխադրման խաչմերուկում, այն է՝ թարգմանության մեջ, որի ընթացքում կարևորվում են այնպիսի գործոններ, ինչպես օրինակ՝ իրադրային համատեքստը, շփման մեջ գտնվող լեզուները, տեքստի գործառնույթը և այլն: Հիմնվելով կուլտուրեմանների դինամիկ բնույթի վրա՝ նա փորձում է իր դասակարգման մեջ զանազանել մշակութային առումով լայն հասկացություններ, որոնք ունակ են հաղթահարելու նախկին՝ առավել սահմանափակ դասակարգումների թերությունները և ներառել մշակութային առավել բազմազան իրադրություններ, որոնք առաջ են գալիս երկու մշակույթների շփման խաչմերուկում: Հիմնվելով Յու. Նայդայի տերմինաբանության վրա՝ հեղինակը առաջարկում է ազգամշակութային տարրերի չորս խումբ, որոնք ներառում են մշակութային բազմաբնույթ հասկացություններ²⁹⁹:

1. բնական միջավայր (բուսական ու կենդանական աշխարհ, մթնոլորտային երևույթներ, կլիմա, տեղանուններ և այլն),
2. մշակութային ժառանգություն (իրական ու մտացածին կերպարներ, պատմական փաստեր, կրոնական գիտելիքներ, տոնակատարություններ, ժողովրդական հավատալիքներ, խորհրդանշական հուշարձաններ և ստեղծագործություններ,

²⁹⁶ S t e ´ u Newmark P. Manual de traducción (versión española de Virgilio Moya). Madrid: Ediciones Cátedra, 1992, p. 134.

²⁹⁷ Nord C. El funcionalismo en la enseñanza de traducción // Mutatis Mutandis. Vol. 2, N 2, 2009, p. 217.

²⁹⁸ Molina Martínez L. Análisis descriptivo de la traducción de los culturemas árabe-español (Tesis doctoral). Universitat Autònoma de Barcelona, 2001, p. 89.

²⁹⁹ Նույն տեղում, էջ 92-96:

գրական գործեր, երաժշտություն, կինո, հատուկ անուններ, գործիքներ, տրանսպորտային միջոցներ և այլն),

3. հասարակական մշակույթ (հասարակական պայմանականություններ և սովորույթներ, վարվելակերպ, քաղաքավարություն, ժեստերի լեզու, բարոյական արժեքներ և այլն),
4. լեզվաբանական մշակույթ (առած-ասացվածքներ, բառային ու հնչունական խնդիրներ, խորհրդանշանային զուգորդումներ և այլն):

Չարկ է նշել, որ ազգամշակութային տարրերի սահմանման ու դասակարգման Լ. Մոլինա Մարտինեսի սկզբունքները լայն ընդունելություն են գտել իսպանական թարգմանաբանական դպրոցում, որի հիման վրա կատարվել են մի շարք ուսումնասիրություններ:

Այսպիսով՝ ամփոփ քննելով վերջին տասնամյակներում մշակութային տարրերի ուսումնասիրության շուրջ տարբեր տեսաբանների մոտեցումները՝ կարելի է փաստել, որ միասնական գիտական սկզբունքների բացակայությունը դժվարացնում է տվյալ խնդրի իմաստավորման, այն է՝ իրականությունների բնորոշման, սահմանման ու դասակարգման քննությունը: Այնուամենայնիվ, առկա են նաև համընդհանուր մոտեցումներ: Այսպես, եթե համեմատենք Ս. Վլախովի, Ս. Ֆլորինի և Լ. Մոլինա Մարտինեսի առաջարկած դասակարգումները, կարող ենք որոշ զուգահեռներ կատարել: Ինչպես արդեն նշել ենք, Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը առաջարկում են իրականությունների երեք խումբ (աշխարհագրական, ազգագրական, քաղաքական-հասարակական), իսկ լեզվաբանական իրականությունները ուսումնասիրում են առանձին: Լ. Մոլինա Մարտինեսը իր դասակարգման մեջ առաջարկում է չորս մեծ մշակութային տիրույթներ (բնական միջավայր, մշակութային ժառանգություն, հասարակական մշակույթ և լեզվաբանական մշակույթ)՝ ներառելով նաև լեզվաբանական կարգերը, թեև այս հարցի շուրջ տարածայնություններն ակնհայտ են նաև իսպանական թարգմանաբանական դպրոցում³⁰⁰:

Չարցի տեսության քննությունը ցույց է տալիս, որ ոչ միայն թարգմանաբանական, այլ նաև համեմատական-տիպաբանական, լեզվաերկրագիտական, լեզվամշակութաբանական և այլ հայեցակերպերում ազգամշակութային տարրերը դարձել են համակողմանի ուսումնասիրության առարկա: Այնուամենայնիվ, չնայած խնդրի կարևորությանը թարգմանության տեսության ու պրակտիկայի համար, դեռևս չկա հայեցակարգային ու տերմինաբանական համաձայնություն տարբեր տեսաբանների միջև: Չմանիշ եզրույթների բազմազանությունը, ինչպես նաև ազգամշակութային տարրերի քննության ընդհանուր սկզբունքների բացակայությունը բարդացնում է դրանց սահմանման ու դասակարգման խնդիրը:

³⁰⁰ S t ' u Luque Nadal L. Los culturemas, ¿unidades lingüísticas, ideológicas o culturales? // Language Design 11, 2009, p. 104.

ԳԻՏԱԿԱԼ ԱՐՑԱԽ SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ № 1(4), 2020
**ON THE PROBLEM OF DEFINITION AND CLASSIFICATION OF
REALIAS IN TRANSLATION STUDIES**

HASMIK BAGHDASARYAN

*Head of the Chair of Romance Philology
at the Faculty of European Languages and Communication,
Yerevan State University, Doctor of Philology, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

TATEVIK EGHIAZARYAN

*Lecturer, PhD student of the Chair of Romance Philology
at the Faculty of European Languages and Communication,
Yerevan State University,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to analyse the problem of definition and classification of the realia - ethnoculturally marked elements in the translation studies - which has not found yet its final scientific solution. In the linguocultural paradigm of modern linguistics the text is viewed as a fragment of the national-linguistic picture of the world and during its translation realias cause specific problems manifesting the dialectal unity of the universal, the national, and the individual as a methodological basis for the translation process. The article examines some of the most prominent theories and approaches to the nature, the definition and the classification of realias in Russian, Western European and American translation schools. The problem is examined not only from the translational but also comparative-linguistic, linguistic-cultural and linguistics and area studies perspectives. In the article, analytical and comparative examination methods are employed.

A brief examination of the theory of this issue shows that despite the importance of the problem for translation theory and practice, there is still no conceptual and terminological consensus between various theorists. The varieties of synonymous terms, as well as the existence of different principles of the study of ethnic and cultural elements, pose major challenges for the definition and classification of the realias.

Key words: *Translation Studies, realia, linguistics and area studies, linguoculturology, translation school, definition and classification of realias, conceptual and terminological disagreement.*

К ПРОБЛЕМЕ ОПРЕДЕЛЕНИЯ И КЛАССИФИКАЦИИ РЕАЛИЙ В ПЕРЕВОДОВЕДЕНИИ

АСМИК БАГДАСАРЯН

Заведующая кафедрой романской филологии факультета европейских языков и коммуникации Ереванского государственного университета, доктор филологических наук, доцент, г. Ереван, Республика Армения

ТАТЕВИК ЕГИАЗАРЯН

Преподаватель, аспирант кафедры романской филологии факультета европейских языков и коммуникации Ереванского государственного университета, г. Ереван, Республика Армения

Целью данной статьи является изучение проблемы определения и классификации языковых единиц этнокультурной маркированности – реалий в переводоведении, которая ещё не имела достаточно исчерпывающего научного решения. В современной лингвокультурной парадигме лингвистики текст рассматривается как часть национально-языкового образа мира, при переводе которого возникают определённые проблемы диктуемые реалиями, которые подчёркивают диалектическое единство всеобщего, национального и индивидуального в качестве методологической основы процесса перевода. В данной статье рассматриваются некоторые из наиболее известных теорий и подходов в классификации, сущности и определении реалий в русской, западноевропейской и американской переводческих школах. Вопрос рассматривается не только с точки зрения переводоведения, но и с точки зрения сравнительной лингвистики, лингвокультурологии и лингвострановедения. В статье используются аналитические и сравнительные методы исследования.

Краткий анализ теории вопроса показывает, что, несмотря на важность проблемы для теории и практики перевода, до сих пор нет концептуального и терминологического единства между различными теоретиками. Разнообразие синонимичных терминов, а также существование различных принципов изучения этнокультурных элементов порождают проблемы при определении и классификации реалий.

Ключевые слова: *переводоведение, реалия, лингвострановедение, лингвокультурология, переводческая школа, определение и классификация реалий, концептуальные и терминологические разногласия.*